Հաստատված է
ՀՀ կառավարության 2002 թվականի
փետրվարի 25-ի N 173 որոշմամբ

# Ց Ա Ն Կ

## Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի աշխատանքային ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 1. «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքից բխող՝ «Դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար անհրաժեշտ դիվանագիտական աստիճանների ցանկը սահմանելու մասին», «Դիվանագիտական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար արտաքին և ներքին մրցույթի ու դիվանագետների փորձաշրջան անցնելու կարգը սահմանելու մասին», «Դիվանագետների ատեստավորումն անցկացնելու կարգը հաստատելու մասին», «Դիվանագետների ռոտացիա իրականացնելու կարգը և դիվանագիտական ծառայության հավասարազոր պաշտոնների ցանկը հաստատելու մասին», «Միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունների կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի կիրարկում | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2002 թ. հունվարի 3-րդ տասնօրյակ | |
| 2. «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | քաղաքաշինական ընթացակարգերի հստակեցման առաջնահերթ միջոցառումների իրականացում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2002 թ. հունվարի 3-րդ տասնօրյակ | |
| 3. «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության ու քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | քաղաքաշինական ընթացակարգերի հստակեցման առաջնահերթ միջոցառումների իրականացում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2002 թ. հունվարի 3-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 4. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայաց-նելը | աշխատանքային հարաբերությունների համապատասխանեցում շուկայական տնտեսության պահանջներին, աշխատանքային պայմանագրերի ավելի մեծ ճկունության հնարավորություն | ՀՀ արդարադատության նախարարություն | 2002 թ. հունվարի 3-րդ տասնօրյակ | |
| 5. «Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերն անհատույց սեփականության իրավունքով համայնքներին փոխանցելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածին համապատասխան համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերն անհատույց, սեփականության իրավունքով համայնքներին փոխանցելու սկզբունքների սահմանում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ՀՀ մարզպետներ | 2002 թ. հունվարի 3-րդ տասնօրյակ | |
| 6. «2002 թվականին պետության կողմից երաշխա-վորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կա-ռավարություն ներկայացնելը | 2002թ. ՀՀ առողջապահության համակարգի բուժհաստատություններում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման արդյունավետ կազմակերպում ու կանոնակարգում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2002 թ. փետրվարի 1-ին տասնօրյակ | |
| 7. «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրա-գրում ընդգրկված բնակավայրերի վերականգնման ենթակա տարածքներից ոչ հիմնական շինությունների ազատման և հեռացման միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | համալիր ծրագրի իրականացման շրջանակներում վերականգնման ենթակա տարածքներից ոչ հիմնական շինությունների ազատման և հեռացման գործընթացի ապա-հովում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2002 թ. փետրվարի 1-ին տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե, արտաբյու-ջետային այլ աղբյուրներ |
| 8. «ՀՀ պետական բարձրագույն և միջին մասնա-գիտական ուսումնական հաստատությունների 2001/2002 ուսումնական տարվա ընդունելության անվճար ուսուցման տեղերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշ-ման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ստանալու՝ ՀՀ քաղաքացիների սահմանադրական իրավունքի իրականացման ապահովում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ | |
| 9. Անապատացման դեմ պայքարի գործողություն-ների ազգային ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայաց-նելը | հետագա դեգրադացիայից հողերի պահպանություն, ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիայից բխող պարտավորությունների կատարում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2002 թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ | |
| 10. «Դիվանագետին դիվանագիտական գործունեություն իրականացնելու նպատակով ՀՀ Նախագահի աշխա-տակազմ, ՀՀ կառավարության աշխատակազմ և գործադիր իշխանության մարմիններ գործուղելու կարգի մասին», «Դի-վանագիտական ծառայության կադրերի ռեզերվում գրանցե-լու և ռեզերվից հանելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի կատարման ապահովում | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2002 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 11. «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքից բխող՝ «Դիվանագիտական աստիճանի համար հավելավճարի մասին», «Օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետների պաշտոնային դրույքաչափերը, ինչպես նաև ծառայության հետ կապված ծախսերի ամսական փոխհատուցման չափը հաստատելու մասին», «Օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնող դիվանագետի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու ծախսերի փոխհատուցման մասին», «Օտարերկրյա պետությունում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետին բնակարանի համար տրամադրվող հավելավճարի մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի կատարման ապահովում | ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2002 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե, այլ աղբյուրներ |
| 12. «ՀՀ անհատական հաշվարանիշերի համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառա-վարություն ներկայացնելը | անհատական հաշվարանիշերի համակարգի ներդրման փորձարկում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն<br>ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ | 2002 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | USAID/ PADCO |
| 13. «ՀՀ ազգային անվտանգության մարմինների օրը նշելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ազգային անվտանգության մարմինների աշխատողների համար մասնագիտական տոնի սահմանում | ՀՀ ազգային անվտանգության նախարարություն | 2002 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | |
| 14. «Հուղարկավորության կազմակերպման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հուղարկավորության հետ կապված իրավահարաբերությունների կարգավորում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2002 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | |
| 15. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | իրավաբանական անձանց պետական գրանցման համար նախատեսված տուրքատեսակների հստակեցում | ՀՀ արդարադատության նախարարություն | 2002 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | |
| 16. «Գեոդեզիայի զարգացման հայեցակարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի կիրարկում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 17. «Ագրարային տեսչությունների մասին» ՀՀ օրեն-քում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նա-խագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապա-տասխանեցում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | |
| 18. «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | մաքսային ծառայության ընթացքում առաջացող հարաբերությունների կարգավորում | ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե | 2002 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | |
| 19. «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչություն-ներից և հյուպատոսական հիմնարկներից ու միջազգային միջպետական (միջկառավարական) կազմակերպություն-ներից ֆիզիկական անձանց ստացած եկամուտներից եկամտահարկի վճարման և հայտարարագրման կարգի մասին» ՀՀ կառա-վարության որոշման նախագիծը ՀՀ կառա-վարություն ներկա-յացնելը | «Եկամտահարկի մասին» ՀՀ գործող օրենքի պահանջներին ներկայումս գործող որոշմամբ սահմանված ընթացակարգի (հայտարարագրի ձևը և հայտարարագրման կարգը) համապատասխանեցում | ՀՀ պետական եկամուտների նախարարություն | 2002 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | |
| 20. «Աշխատանքի դիմաց նպաստի նշանակման և վճարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարու-թյան որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ժամանակավոր զբաղվածության ապահովում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2002 թ. մարտի1-ին տասնօրյակ | |
| 21. «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կա-ռավարություն ներկայացնելը | քաղաքացիական ավիացիայի համակարգի օրենս-դրական կարգավորում | ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | 2002 թ. մարտի 1-ին տասնօրյակ | |
| 22. «Դրսեկության ձևով միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը սահմանելու մա-սին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառա-վարություն ներկայացնելը | «Կրթության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջի կատարում, դրսեկության ձևով քաղաքացիների ուսուցմնառության ապահովում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. մարտի 1-ին տասնօրյակ | |
| 23. «Մագիստրատուրայի 2002/2003 ուսումնական տարվա ընդունելության պետական պատվերը և ասպի-րանտուրայի ու դոկտորանտուրայի 2002/2003 ուսում-նական տարվա պետական պատվերը հաստատելու մա-սին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառա-վարություն ներկայացնելը | բարձրագույն մասնագիտական կրթության շարունակականության և հետբուհական կրթության ապահովում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. մարտի 1-ին տասնօրյակ | |
| 24. «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | փախստականների համար ՀՀ քաղաքացիություն ստանալու գործընթացի շարունակման ապահովում | ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն | 2002 թ. մարտի 1-ին տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 25. «Բնակչության միգրացիայի տեղեկատվական համակարգի ստեղծման հայեցակարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | միգրացիայի վերաբերյալ տեղեկատվության հավաքման, մշակման և ամբողջական տեղեկատվության ստացման ապահովում | ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն | 2002 թ. մարտի 1-ին տասնօրյակ | |
| 26. «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | արդյունաբերական սեփականության իրավական դաշտի կատարելագործում | ՀՀ արտոնագրային վարչություն<br>ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. մարտի 1-ին տասնօրյակ | |
| 27. «Հայաստանի Հանրապետությունում 2002-2005 թվականներին գյուղատնտեսական մելիորացիայի զարգացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Արարատյան հարթավայրի հողերի մելիորատիվ վիճակի բարելավում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2002 թ. մարտի 1-ին տասնօրյակ | |
| 28. «Ներքին գործերի համակարգում ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ ներքին գործերի համակարգում ծառայության անցնելու կարգի օրենսդրորեն ամրագրում | ՀՀ ներքին գործերի նախարարություն | 2002 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | |
| 29. «ՀՀ կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչության կանոնադրությունը և կենտրոնական ապարատի կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքին՝ կանոնադրության դրույթների համապատասխանեցում | ՀՀ կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչություն | 2002 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | |
| 30. «Առևտրի իրականացման վայրի (տոնավաճառ, շուկա և այլն) կազմակերպիչների կողմից առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեություն իրականացնողների վերաբերյալ տեղեկությունները ներկայացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | գործունեության իրականացման այս ոլորտում հարկային վարչարարության արդյունավետության բարձրացում, առևտրի իրականացման վայրերում ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց բացահայտում և դրանց հարկման դաշտում ընդգրկում | ՀՀ պետական եկամուտների նախարարություն | 2002 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | |
| 31. «Որոշ ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների և գների վերաբերյալ հաշվետվությունները հարկային մարմիններ ներկայացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա կարևոր ազդեցություն ունեցող ապրանքատեսակների արտադրության և իրացման ծավալների վերաբերյալ հավաստի տեղեկատվության ստացում | ՀՀ պետական եկամուտների նախարարություն | 2002 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 32. ՀՀ Սյունիքի մարզի հիմնախնդիրների լուծմանն միջոցառումների ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ Սյունիքի մարզի հիմնախնդիրների լուծման միջոցառումների ծրագրի և ժամանակացույցի հաստատում | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար ՀՀ նախարարություններ և գերատեսչություններ ՀՀ Սյունիքի մարզպետ | 2002 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե, ֆինանսավորման այլ աղբյուրներ |
| 33. «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | աուդիտորական գործունեության իրավական կարգավորման ապահովում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2002 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | |
| 34. «ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջի կատարում | ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն | 2002 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | |
| 35. «Մաքսային մարմինների պաշտոնատար անձանց հրազենով ապահովելու, հրազենի, զինամթերքի և հատուկ միջոցների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ մաքսային օրենսգրքի 246-րդ հոդվածով սահմանված պահանջների կատարման ապահովում | ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե | 2002 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | |
| 36. «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումը շարունակելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Կրթության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջի կատարում, շրջանավարտների շարունակական կրթության ապահովման հնարավորությունների ընդլայնում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | |
| 37. «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքից բխող՝ «Օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանությունների կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի կիրարկում | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2002 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | |
| 38. «Դիվանագետի էթիկայի կանոնների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջի կատարման ապահովում | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2002 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 39. «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրեն-քից բխող՝ «Օտարերկրյա պետությունում գործող Հա-յաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների՝ ՀՀ պետական բյուջեից բացի այլ աղբյուր-ներից ֆինանսավորման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջի կատարման ապահովում | ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2002 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե, այլ աղբյուրներ |
| 40. «Դիվանագիտական ծառայության մասին» և «Պե-տական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքներից բխող՝ «ՀՀ պետական արարողակարգի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախա-գիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Դիվանագիտական ծառայության մասին» և «Պետական կառավարչական հիմնարկների մասին»<br>ՀՀ օրենքների պահանջների կատարման ապահովում | ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ արդարադատության նախարարություն | 2002 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | |
| 41. «Դիվանագիտական ծառայության մասին» և «Պե-տական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքներից բխող՝ «Սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Դիվանագիտական ծառայության մասին» և «Պետական կառավարչական հիմնարկների մասին»<br>ՀՀ օրենքների պահանջների կատարման ապահովում | ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ արդարադատության նախարարություն | 2002 թ. մարտի 2-րդ տասնօրյակ | |
| 42. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կա-տարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարու-թյուն ներկայացնելը | իրավախախտումների նկատմամբ վարչական ներգործության միջոցների ուժեղացում | Երևանի քաղաքապետ | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 43. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրեն-քում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | տեղական տուրքերի սահմանման տարբերակված մոտեցման կիրառում, տեղական տուրքերի իրական դրույքաչափերի սահմանում | Երևանի քաղաքապետ | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 44. «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ներհանրապետական փոխադրումների դիմաց վճարի գանձում | Երևանի քաղաքապետ | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 45. «ՀՀ պետական հանրակրթական հաստատու-թյունների՝ կառավարման և ֆինանսավորման նոր կարգին անցնելու ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարու-թյուն ներկայացնելը | ՀՀ կրթության զարգացման 2001-2005 թվականների պետական ծրագրի 6-րդ բաժնի 1-ին կետի 6-րդ ենթակետի պահանջի կատարման և դպրոցների ինքնուրույնության աճի ապահովում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 46. «Մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատա-րելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ օրենսդրության համապատասխանեցում ԱՀԿ-ի չափանիշներին, մաքսային օրենսգրքի լրամշակում՝ արդի պայմաններից ելնելով | ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե<br>ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 47. «Հայաստան» բառի հոլովածները և դրանց թարգմանությունները, ինչպես նաև ժառանգ չունենալու դեպքում մահացած հանրահայտ անձի անունը հասարակական կազմակերպության անվանման մեջ օգտագործելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջի կատարում | ՀՀ արդարադատության նախարարություն | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 48. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքից գոյացած գումարների 30 տոկոսի ուղղումը մայրաքաղաքի համաքաղաքային նշանակության կապիտալ ծախսերին, 10 տոկոսի ուղղումը՝ թաղային համայնքներին | Երևանի քաղաքապետ | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 49. «Հեռակա ձևով միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հեռակա ձևով միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների նորացում, ստեղծված պայմաններում հեռակա ձևով ուսումնառության հնարավորությունների ընդլայնում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 50. «Պետական բաժնեմաս ունեցող իրավաբանական անձանց լուծարման կանոնակարգը փոփոխելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | լուծարման գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացում | ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն<br>ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 51. «Հիմնական և ընթացիկ նորոգման աշխատանքների դասակարգման և դրանց նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմի վերաբերյալ կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | քաղաքաշինական ընթացակարգերի հստակեցում ու պարզեցում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 52. «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | արտագնա աշխատանքների կազմակերպման ոլորտում սուբյեկտների իրավահարաբերությունների կարգավորում | ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 53. «Բժշկական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | սոցիալական արդարության և համերաշխության սկզբունքների հիման վրա ռեսուրսների նպատակային օգտագործում, բժշկական օգնության հասցեագրվածության և արդյունավետության բարձրացում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 54. «ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից՝ 50 և ավելի տոկոս բաժնետոմսերի տնօրինումն իրականացնող «Մելիորացիա» ՓԲԸ-ի հիմնական միջոցների վերագնահատման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հանրապետության բաց և փակ ցամաքուրդային համակարգերի գույքագրում և վերագնահատում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 55. Պետական բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու մասին հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացում | ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն<br>ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 56. «Ոստիկանության աշխատողների համազգեստի ձևը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ոստիկանության աշխատողների համազգեստի ձևի սահմանում | ՀՀ ներքին գործերի նախարարություն | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 57. «Դրոշմավորման ենթակա չդրոշմավորված, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների՝ հարկային մարմինների կողմից ոչնչացման (այդ ապրանքային տեսքով շրջանառությունից դուրսբերման) կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ապօրինի գործունեության բացահայտման դեպքերում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28.2-րդ հոդվածով հարկային մարմիններին վերապահված իրավունքների հստակ և արդյունավետ կիրառման ապահովում | ՀՀ պետական եկամուտների նախարարություն | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 58. «Մաքսային մարմինների կողմից տնօրինման ենթակա ապրանքների նկատմամբ տնօրինման գործողությունների իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ մաքսային օրենսգրքի 234, 235, 236 և 237-րդ հոդվածներով սահմանված գործառույթների կատարման ապահովում | ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 59. «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | այլ զորքերի զինծառայողների սոցիալական ապահովության բարելավում և «Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի դրույթներին «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի համապատասխանեցում | ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչություն | 2002 թ. մարտ 3-րդ տասնօրյակ | |
| 60. «Պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների և պետական գնումների շրջանակներում պետության փոխադարձ պարտավորությունների վերակառուցման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ պետական բյուջեի նկատմամբ շահաբաժինների գծով պարտավորություններ ունեցող և ՀՀ պետական բյուջեից բերֆինանսավորված առևտրային կազմակերպությունների ֆինանսական հարաբերությունների կարգավորում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 61. ՀՀ ջրային օրենսգրքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի իրավական կարգավորում | ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտե | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 62. «Հայաստանի Հանրապետությունում տեղագրական և կադաստրային քարտեզագրման գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Տեղագրական և կադաստրային քարտեզագրում» լիցենզավորվող գործունեության կանոնակարգում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 63. «Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Անշարժ գույքի գնահատում» լիցենզավորվող գործունեության կանոնակարգում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 64. «Հայաստանի Հանրապետությունում ռիելթորական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Ռիելթորական գործունեություն» լիցենզավորվող գործունեության կանոնակարգում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 65. «Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորման ենթակա անշարժ գույքի գնահատման և ռիելթորական գործունեության տեսակների հայտատու ֆիզիկական անձանց մասնագիտական որակավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարում, անշարժ գույքի շուկայի կանոնակարգում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 66. ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական սեփականություն հանդիսացող հողամասերը օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 286 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան պետական սեփականություն հանդիսացող հողամասերը տարբեր նպատակային նշանակությամբ օգտագործելու և օտարելու խնդիրների կանոնակարգում, հողի շուկայի աշխուժացում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 67. «Գյուղատնտեսական նշանակության հողամասերի վրա բնակելի և (կամ) հասարակական և (կամ) արտադրական նշանակության շենքերի, շինությունների կառուցումը սահմանափակելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ հողային օրենսգրքի կիրարկման ապահովում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 68. «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | միասնական քրեակատարողական համակարգի՝ քրեական պատիժները կատարող քրեակատարողական ծառայության գործունեության հիմունքների և կարգի, քրեակատարողական մարմինների ու հիմնարկների, դրանց աշխատողների իրավական վիճակի, ինչպես նաև նրանց սոցիալական և նյութական պաշտպանության երաշխիքների սահմանում | ՀՀ արդարադատության նախարարություն | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 69. Տեղեկատվական մարքեթինգային կենտրոնի ստեղծում և գործունեության ծավալում | Հայաստանի արտադրողի տեղեկատվական ինտեգրացում համաշխարհային տնտեսության մեջ | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | |
| 70. «Մաքսային մարմինների պաշտոնատար անձանց համազգեստի ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ մաքսային օրենսգրքի 238-րդ հոդվածով սահմանված պահանջների կատարման ապահովում | ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե | 2002 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ | |
| 71. «Որևէ հարկային պարտավորությունից ավելի վճարված գումարների (գերավճարների) հաշվանցման և վերադարձի, ինչպես նաև հսկիչ գնումների իրականացման դեպքերում հարկային մարմնի կողմից ուսումնասիրությունների անցկացման կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հարկային մարմինների կողմից հարկային պարտավորությունների կատարման նկատմամբ օպերատիվ վերահսկողության իրականացման ապահովում | ՀՀ պետական եկամուտների նախարարություն | 2002 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ | |
| 72. «Կինոարվեստի զարգացման հայեցակարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | կինոարվեստի զարգացման հիմնական ուղղությունների նախանշում և պետական աջակցության ձևերի սահմանում | ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն | 2002 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ | |
| 73. «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | քաղաքաշինական վերահսկողության գործառույթների հստակեցում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն Երևանի քաղաքապետ | 2002 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ | |
| 74. «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | քաղաքաշինության ոլորտում իրավախախտումների կանխարգելման միջոցառումների իրականացում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն Երևանի քաղաքապետ | 2002 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ | |
| 75. «Էլեկտրոնային զարգացումը Հարավային Կովկասում» խորագրով տեղեկատվական տեխնոլոգիաների տարածաշրջանային կոնֆերանսի կազմակերպման վերաբերյալ ՀՀ կառավարություն տեղեկատվություն ներկայացնելը | տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը Հարավային Կովկասում, Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների տարածաշրջանային կենտրոնի ստեղծում | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2002 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե, եվրոպական հանձնաժողով |
| 76. «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ոլորտի իրավական դաշտի ձևավորում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 77. «ՀՀ տարածքում WGS-84 կոորդինատային համակարգի ներդրման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ տրանսպորտի և գեոդեզիայի բնագավառում գլոբալ նավիգացիոն արբանյակային համակարգի ներդրման ու օգտագործման համար պայմանների ստեղծում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ | |
| 78. «Կազմակերպությունների դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | դրամարկղային գործառնությունների իրավական կարգավորման ապահովում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2002 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | |
| 79. «Կազմակերպություններին և քաղաքացիներին պատկանող տրանսպորտի ու կապի միջոցներից օգտվելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | տրանսպորտի և կապի միջոցներից օգտվելու կարգի սահմանում | ՀՀ ներքին գործերի նախարարություն | 2002 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | |
| 80. «Կինոարվեստին պետական աջակցություն ցուցաբերելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | կինոարվեստի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում | ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն | 2002 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | |
| 81. «Դիվանագիտական ծառայության մասին» և «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքներից բխող` «ՀՀ արտաքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Դիվանագիտական ծառայության մասին» և «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքների պահանջների կատարման ապահովում | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2002 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | |
| 82. «Հանրակրթական ծրագրեր իրականացնող պետական և համայնքային ուսումնական հաստատությունները պետական (համայնքային) ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմավորելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հանրակրթության բարեփոխումների ընթացքը և «Կրթության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի պահանջի կատարման ապահովում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | |
| 83. «Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանջի կատարում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2002 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | |
| 84. «Հայաստանի Հանրապետությունում երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպման լիցենզավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանջի կատարում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2002 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 85. «Առանց հսկողության թողնված, ինչպես նաև հաշվառման մեջ գտնվող անչափահասների կողմից կատարվող հանցագործությունները կանխելու և անչափահասներին դաստիարակելու ուղղությամբ պետական և հասարակական մարմինների կողմից իրականացվող միջոցառումների կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հաշվառման մեջ գտնվող անչափահասներին դաստիարակելու ուղղությամբ պետական և հասարակական մարմինների գործունեության կանոնակարգում | ՀՀ ներքին գործերի նախարարություն | 2002 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | |
| 86. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում ամրագրված առանձին դրույթների հստակեցում | ՀՀ արդարադատության նախարարություն | 2002 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | |
| 87. «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում որոշ կատեգորիայի բնակիչներին արտոնություններ տրամադրելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | համալիր ծրագրի իրականացման ապահովում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2002 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | |
| 88. «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | պատմամշակութային արժեքներին հուշարձանի կարգավիճակի շնորհում և ըստ նշանակության դրանց դասակարգում | ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչություն | 2002 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |
| 89. Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի համակարգի ֆինանսական առողջացման ծրագրի ու «Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավման միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | խմելու ջրի և կոյուղու համակարգի ֆինանսական առողջացում | ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտե<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2002 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | |
| 90. «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | կենսաթոշակային օրենսդրության միասնականացում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն<br>ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ | 2002 թ. մայիսի 1-ին տասնօրյակ | |
| 91. «Հայաստանի Հանրապետությունում հսկվող դեղերի և նյութերի ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | թմրաբեր և հոգեմետ դեղամիջոցների ապօրինի շրջանառության կանխման նպատակով դրանց դուրս-գրման և հաշվառման հսկում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2002 թ. մայիսի 1-ին տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 92. «Քաղաքական ապաստանի իրավունք տալու հարցերով զբաղվող լիազոր պետական մարմին ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստանի իրավունք տալու հարցերով զբաղվող լիազոր պետական մարմնի ճանաչում | ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն | 2002 թ. մայիսի 1-ին տասնօրյակ | |
| 93. «Քաղաքական ապաստանի իրավունք ստանալու դիմումի ձևը, դրան կցվող փաստաթղթերի ցանկն ու լիազոր պետական մարմնում բացված գործը կազմելու և վարելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | քաղաքական ապաստանի իրավունք ստանալու դիմումի ձևի, դրան կցվող փաստաթղթերի ցանկի ու լիազոր պետական մարմնում բացված գործը կազմելու և վարելու կարգի սահմանում | ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն | 2002 թ. մայիսի 1-ին տասնօրյակ | |
| 94. «Քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձին Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստանի իրավունքի վկայական և ճամփորդական փաստաթուղթ տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձին Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստանի իրավունքի վկայական և ճամփորդական փաստաթուղթ տալու կարգի սահմանում | ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն | 2002 թ. մայիսի 1-ին տասնօրյակ | |
| 95. «Քաղաքական ապաստանի իրավունք հայցողին և քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձին ժամանակավոր կացարանով ապահովելու կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | քաղաքական ապաստանի իրավունք հայցողին և քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձին ժամանակավոր կացարանով ապահովելու կարգի և պայմանների սահմանում | ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն | 2002 թ. մայիսի 1-ին տասնօրյակ | |
| 96. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխու-թյուններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ոլորտի օրենսդրության կատարելագործում, օտարերկրյա պետություններում աշխատանքի տեղավորման ծառայությունների լիցենզավորում, Հայաստանի Հանրապետությունում պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղե-կատվության գաղտնագրային ու տեխնիկական պաշտպանության միջոցների անվերահսկելի շրջանառության և անօրինական նպատակներով դրանց հնարավոր օգտագործման կանխում, ինչպես նաև տեղեկատվության պաշտպանության որակյալ միջոցների պահանջարկի ապահովում, «Միջուկային անվտանգության մասին» կոնվենցիայի (7, 8, 11, 12 և 18-րդ հոդվածներ) պահանջներին համապատասխանեցում, ՀՀ հողային օրենսգրքի կիրարկման ապահովում | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ ազգային անվտանգության նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն<br>Հայպետատոմ-հսկողություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 97. «ՀՀ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ գործող օրենքներին ՀՀ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրության մի շարք հոդվածների համապատասխանեցում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ | |
| 98. «ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | պետական կառավարման մարմնի գործառույթների հստակեցում | ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն | 2002 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ | |
| 99. «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում բնակարանների գնման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | շուկայից պատրաստի բնակարան ձեռք բերելու համար պետական ֆինանսական աջակցության համակարգի ստեղծում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2002 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |
| 100. «Հաշվետու տարվա արդյունքներով հարկային վնասներ հայտարարագրած և ապառքներ կուտակած հարկ վճարողների վերաբերյալ տվյալների հրապարակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հարկային կարգապահության բարձրացում | ՀՀ պետական եկամուտների նախարարություն | 2002 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ | |
| 101. «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա հուշարձանների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի պահանջի կատարում | ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչություն | 2002 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ | |
| 102. «Էլեկտրաէներգիա արտադրող ընկերությունների (Հրազդանի ՋԷԿ, Երևանի ՋԷԿ, Սևան-Հրազդանյան կասկադ, Որոտանի ՀԷԿ-երի համակարգ) մասնավորեցման մասին» ՀՀ օրենքի (օրենքների) նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թթ. ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում | ՀՀ էներգետիկայի նախարարություն<br>ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն | 2002 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ | |
| 103. «Էներգատեղակայանքների տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | էներգետիկայի բնագավառում տեխնիկական վերահսկողության գործընթացի կանոնակարգում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | 2002 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ | միջազգային դոնոր կազմակերպություններ |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 104. «Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի հատուկ պահպանվող տարածքների ռեժիմների ու գոտիների սահմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջի կատարման ապահովում | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե<br>ՀՀ Գեղարքունիքի մարզպետ | 2002 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ | |
| 105. «Սևանա լճում և դրա ջրհավաք ավազանում տնտեսական գործունեության իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջի կատարման ապահովում | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե<br>ՀՀ Գեղարքունիքի մարզպետ | 2002 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ | |
| 106. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ցուցանիշների պետական հաշվառման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ճանապարհային երթևեկության անվտագության ցուցանիշների հաշվառման կարգի ապահովում | ՀՀ ներքին գործերի նախարարություն | 2002 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |
| 107. «Սևանա լճի էկոհամակարգի բնօգտագործման և բնական միջավայրի պահպանության ռեժիմ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջի կատարման ապահովում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2002 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |
| 108. Հայաստան-սփյուռքերկրորդխորհրդաժողովիկազմակերպում և անցկացում | Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդում | ՀՀ արտաքին գործերի նախարարություն սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարություն<br>ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն<br>ՁՀԳ | 2002 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե, այլ աղբյուրներ |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 109. «Միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ միջին մասնագիտական կրթության համակարգի օրենսդրական ապահովվածության բարելավում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |
| 110. «ՀՀ ազգային անվտանգության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի պահանջներին կանոնադրության դրույթների համապատասխանեցում | ՀՀ ազգային անվտանգության նախարարություն | 2002 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |
| 111. «ՀՀ կառավարության 2001 թվականի հուլիսի 12-ի N 636 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ տարածքում Հայաստանի հանրային ռադիոյի ծրագրի սփռման ապահովում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2002 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |
| 112. «ՀՀ կառավարության 2001 թվականի հունիսի 21-ի N 559 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ տարածքում Հայաստանի հանրային հեռուստա-տեսության ծրագրի սփռման ապահովում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2002 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |
| 113. Հայաստանի Հանրապետությունում սերմնաբու-ծության զարգացման հայեցակարգի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնաբուծության զարգացման գիտականորեն հիմնավորված սկզբունքների և դրան հասնելու միջոցառումների մշակում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2002 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |
| 114. «Գիտության ֆինանսավորման ընդհանուր ծավալում բազային ֆինանսավորման մասնաբաժինը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման բարելավում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա<br>ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |
| 115. «Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության (ծառայության) մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ծառայության գործունեության բարելավում և կատարելագործում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2002 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 116. «Արտակարգ իրավիճակների դասակարգումը՝ կախված հնարավոր հետևանքների մասշտաբից, տարերային և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներում բնակչության կենսաապահովման չափաքանակներն ու տարերային և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներում բնակչության կենսաապահովման և փրկարարական աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ նյութական պաշարների ստեղծման և օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառի իրավական կարգավորման բարելավում | ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչություն | 2002 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |
| 117. Հայաստանի Հանրապետության բնակավայրերի ջերմամատակարարման ռազմավարության հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | համակարգի իրավական, կարգավորիչ, շուկայական կառուցվածքին վերաբերող և ֆինանսական հարցերի լուծում, բնակչության անապահով խավերի ջեռուցման ապահովման նպատակով ՀՀ պետական բյուջեից օգնության տրամադրման մեխանիզմների սահմանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվության սահմանազատում, ջեռուցման ծառայությունների պահանջարկի և մատչելիության գնահատման արդյունքների նկարագրում ու վերլուծություն, առնվազն Երևան և Գյումրի քաղաքներում ջեռուցման կարիքները բավարարելու համար տնտեսապես հնարավոր ջերմամատակարարման տարբերակների նախանշում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2002 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |
| 118. «ՀՀ էներգահամակարգի ընկերությունների գործունեության և կառավարման բարելավման հայեցակարգի, 2002-2006 թթ. ֆինանսական հոսքերի ու դրանց իրականացման միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | էներգահամակարգի ընկերությունների ֆինանսական առողջացում, գործունեության և կառավարման բարելավում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | 2002 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |
| 119. «Պետական տեղագրական քարտեզների և հատակագծերի մասշտաբային շարքերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի կիրարկման ապահովում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |
| 120. «Գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների վերահսկողության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի կիրարկման ապահովում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 121. «Ազգային ատլասի ստեղծման նպատակով խմբագրական կոլեգիայի կազմը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նաձագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ատլասի ստեղծման աշխատանքների կանոնակարգում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |
| 122. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «ՀՀ հողային օրենսգրքի» պահանջների հիման վրա օրենսդրական դաշտի լրացում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |
| 123. Հայաստանի Հանրապետության բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության որակի կառավարման և բարելավման հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | բժշկական օգնության արդյունավետության բարձրացում, առողջապահության ոլորտում քաղաքացիների իրավունքների իրացման ապահովում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2002 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | |
| 124. «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ կրթության զարգացման 2001-2005 թթ. պետական ծրագրի 6-րդ բաժնի 2-րդ կետի կատարման ապահովում, «ՀՀ պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին՝ հաստատության կանոնադրության համապատասխանեցում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. հունիսի 1-ին տասնօրյակ | |
| 125. «ՀՀ պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ կրթության զարգացման 2001-2005 թթ. պետական ծրագրի 6-րդ բաժնի 2-րդ կետի կատարման ապահովում և հատուկ կրթօջախների ինքնավարության ընդլայնմանը նպաստում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. հունիսի 1-ին տասնօրյակ | |
| 126. «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ կրթության զարգացման 2001-2005 թթ. պետական ծրագրի 6-րդ բաժնի 2-րդ կետի կատարման ապահովում, նախադպրոցական կրթության ոլորտի իրավական կարգավորման բարելավում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. հունիսի 1-ին տասնօրյակ | |
| 127. «Արտադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ կրթության զարգացման 2001-2005 թթ. պետական ծրագրի 6-րդ բաժնի 2-րդ կետի կատարման ապահովում, արտադպրոցական կրթության կազմակերպման բարելավում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. հունիսի 1-ին տասնօրյակ | |
| 128. «Միջուկային և ռադիոակտիվ նյութերի փոխադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի (23-րդ հոդված) և ՀՀ կառավարության 2001 թ. դեկտեմբերի 24-ի «Միջուկային և ռադիոակտիվ նյութերի փոխադրման հատուկ կանոնները հաստատելու մասին» N 1263 որոշման պահանջների կատարումը | Հայպետատոմ-հսկողություն | 2002 թ. հունիսի 1-ին տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 129. «Հանրակրթական հաստատություններում վճարովի կրթական ծառայությունների իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ կրթության զարգացման 2001-2005 թթ. պետական ծրագրի 6-րդ բաժնի 2-րդ կետի պահանջի կատարման ապահովում, վճարովի կրթական ծառայությունների մատուցման կանոնակարգում և խրախուսում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. հունիսի 1-ին տասնօրյակ | |
| 130. «Առողջապահության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | առողջապահության ոլորտի գործունեության կանոնակարգում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2002 թ. հունիսի 1-ին տասնօրյակ | |
| 131. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | համայնքի բյուջեի կառուցվածքում, որպես հարկային եկամուտ, եկամտահարկի 15 տոկոսի նախատեսում | Երևանի քաղաքապետ | 2002 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | |
| 132. «ՀՀ քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունից ելքի և Հայաստանի Հանրապետություն մուտքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունից ելքի և Հայաստանի Հանրապետություն մուտքի կանոնակարգում | ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն | 2002 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | |
| 133. «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | մշակութային արժեքների արտահանման ու ներմուծման խնդիրների հստակեցում և կանոնակարգում | ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն | 2002 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | |
| 134. «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | սոցիալական աջակցության բնագավառի իրավական կարգավորման ապահովում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2002 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | |
| 135. «Վայրի կենդանիներ և կենդանաբանական հավաքածուները Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հանրապետությունից կենդանիների արտահանումը և հանրապետություն դրանց ներմուծումը կանոնակարգող մեխանիզմների ստեղծում, կենսաանվտանգության ապահովում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2002 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | |
| 136. «Բուսաբանական հավաքածուները և առանձին նմուշներ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հանրապետությունից բույսերի արտահանումը և հանրապետություն դրանց ներմուծումը կանոնակարգող մեխանիզմների ստեղծում, կենսաանվտանգության ապահովում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2002 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 137. «Պետական ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների լուծարման և (կամ) մասնավորեցման (սեփականաշնորհման) դեպքում Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի մասին փաստաթղթերը պետական արխիվներ հանձնելու կարգի մասին» ՀՀ կառավարության 1998 թվականի սեպտեմբերի 18-ի N 573 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | փաստաթղթերի արխիվացման գործընթացի հստակեցում | ՀՀ կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչություն | 2002 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | |
| 138. «Ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման հիմնադրույթները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ԱԷՄԳ-ի գլխավոր տնօրենի 2000 թ. հոկտեմբերի 13-ի նամակը ՀՀ արտաքին գործերի նախարարությանը իոնացնող ճառագայթման աղբյուրների տեղաշարժի պետական կարգավորումը և հսկողությունը միջազգային պահանջներին համապատասխանեցնելու մասին | Հայպետատոմ-հսկողություն | 2002 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | |
| 139. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ հողային օրենսգրքի կիրարկման ապահովում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | |
| 140. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ գյուղի սողանքային գոտում գտնվող բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրների լուծման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | սողանքային գոտում գտնվող բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրների լուծում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2002 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |
| 141. «Համայնքների տարածքում կառուցապատողի կողմից համայնքի ենթակառուցվածքի բարելավման նպատակով ներդրումներ կատարելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | համայնքի ենթակառուցվածքի բարելավում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2002 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ | |
| 142. «Բարձրագույն մասնագիտական կրթության և հետբուհական ուսուցման համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցման ծրագրերի ապահովման և կատարելագործման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի կրթական և կադրային ապահովում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | |
| 143. Հայաստանի Հանրապետությունում տոհմաբուծության զարգացման հայեցակարգի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | տոհմային գործի իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2002 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 144. «Ագրարային պետական տեսչությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին« ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Ագրարային պետական տեսչությունների մասին», «Անասնաբուժության մասին» ու «Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի մասին» ՀՀ օրենքների միջև առկա հակասությունների վերացում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2002 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | |
| 145. «Միջին և բարձրագույն մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների՝ ըստ սովորողների թվի, ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման հստակեցում և կոնկրետացում, տնտեսավարման խելամիտ ու խնայողական համակարգի ձևավորում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | |
| 146. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության օրենսդրական դաշտի մանրամասնում և հստակեցում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | |
| 147. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | գիտության բազային ֆինանսավորման գործընթացի կանոնակարգում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա | 2002 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | |
| 148. «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածման կանխարգելում և այդ նպատակով միջգերատեսչական հակազդեցության իրականացում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2002 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | |
| 149. «ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության գնահատման հաշվապահության բովանդակությանը և կառուցվածքին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Միջուկային անվտանգության մասին կոնվենցիայի» պահանջների կատարումը (NN.7,14) | Հայպետատոմհսկողություն | 2002 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | |
| 150. «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | բնագավառի օրենսդրական կարգավորում | ՀՀ արդարադատության նախարարություն | 2002 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 151. «Խոշոր պետական ընկերությունների ֆինանսական վիճակի վերաբերյալ եռամսյակային հրապարակային հաշվետվությունների համակարգի ներդրման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | պետության գործունեության հրապարակայնության ապահովում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն ՀՀ պետական եկամուտների նախարարություն համապատասխան ճյուղային նախարարություններ | 2002 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | |
| 152. «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ հողային օրենսգրքի կիրարկման ապահովում, հողային ֆոնդի նպատակային օգտագործում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ՀՀ բնապահպանության նախարարություն | 2002 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | |
| 153. «Հայանտառ» ՓԲԸ-ի 2002-2005 թթ. ֆինանսական հոսքերի ծրագրավորման աշխատանքների իրականացում | ընկերության ֆինանսական կառավարման մեխանիզմների կատարելագործում, տնտեսական առավել արդյունավետ որոշումներ ընդունելու համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգի ձևավորում | ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2002 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | |
| 154. «Գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական աշխատանքները դասակարգելու (հասկացությունները սահմանելու) մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի կիրառման ապահովում | ՀՀ պետական եկամուտների նախարարություն ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. հուլիսի 1-ին տասնօրյակ | |
| 155. «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ապահովագրական ընկերությունների գործունեությունը կանոնակարգող օրենսդրության կատարելագործում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2002 թ. հուլիսի 1-ին տասնօրյակ | |
| 156. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքի հետ առկա հակասությունների վերացում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2002 թ. հուլիսի 1-ին տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 157. «Շրջակա միջավայրի հիգիենայի բնագավառում գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանի Հանրապետության բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների վնասակար ազդեցության ուսումնասիրություն, դրա նվազեցման միջոցառումների մշակում և իրականացում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2002 թ. հուլիսի 1-ին տասնօրյակ | |
| 158. «1997 թվականի հուլիսի 18-ի Նոյեմբերյանի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2002 թ. հուլիսի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |
| 159. «Ոչ սթափ վիճակում գտնվելու մասին հիմքերի առկայությամբ, ինչպես նաև տրանսպորտային միջոցը վարելու կամ դրանից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր չունեցող անձանց տրանսպորտային միջոցներ վարելուց մեկուսացնելու և տրանսպորտային միջոցն արգելանքի տակ դնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | տրանսպորտային միջոցը վարելու կամ դրանից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր չունեցող անձանց տրանսպորտային միջոցներ վարելուց մեկուսացնելու և տրանսպորտային միջոցն արգելանքի տակ դնելու կարգի սահմանում | ՀՀ ներքին գործերի նախարարություն | 2002 թ. հուլիսի 2-րդ տասնօրյակ | |
| 160. «Ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հրազենի և ռազմամթերքի տեսակների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | սպառազինության մեջ ընդգրկման ենթակա հրազենի տեսակների հստակեցում | ՀՀ ներքին գործերի նախարարություն | 2002 թ. հուլիսի 2-րդ տասնօրյակ | |
| 161. «Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի մասին» ՀՀ օրենքից բխող «Բույսերի պաշտպանության ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ծառայության գործունեության կանոնակարգում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2002 թ. հուլիսի 2-րդ տասնօրյակ | |
| 162. «Քաղաքացիներին և կազմակերպություններին պատկանող հատուկ հաշվառման ենթակա առարկաների, սարքավորումների և փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հատուկ հաշվառման ենթակա առարկաների, սարքավորումների և փաստաթղթերի ապօրինի շրջանառության կանխում | ՀՀ ներքին գործերի նախարարություն | 2002 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | |
| 163. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 8-ի «Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության պետական չափորոշիչը հաստատելու մասին» N 226 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | 11-ամյա հանրակրթական դպրոցի խնդիրներին չափորոշիչի համապատասխանեցում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 164. «2003 թվականի գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական նպատակային ծրագրերը ներկայացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | գիտության նպատակային-ծրագրային ֆինանսավորման ներդրում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա | 2002 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | |
| 165. «Երթևեկության անվտանգության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | երթևեկության անվտանգության կանոնների սահմանում | ՀՀ ներքին գործերի նախարարություն | 2002 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | |
| 166. «ՀՀ հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | միջազգային պայմանագրերին օրենքի համապատասխանեցում | ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալություն ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | |
| 167. «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | գրանցամատյանում տնօրենի մասին տեղեկությունների ներառում | ՀՀ արդարադատության նախարարություն | 2002 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | |
| 168. Զբոսաշրջության ոլորտում համայնքային զարգացման ծրագիր մշակելը և այն ՀՀ կառավարություն ներկայացնելը | համայնքներում զբոսաշրջության ոլորտի զարգացում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | |
| 169. «Պետական և ծառայողական գաղտնիք բովանդակող նյութերից ու տվյալներից օգտվելու համար թույլտվություն ստանալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի կիրարկման ապահովում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | |
| 170. «Հողի բերրի շերտի հանման, պահպանման, օգտագործման և տեղափոխման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ հողային օրենսգրքի կիրարկում, հողի բերրի շերտի պահպանում | ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 171. «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | մարզերի և բնակավայրերի սահմանների նկարագրում, բնակավայրերի կրկնվող, օտար, անբարեհունչ անվանումների փոփոխում | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար | 2002 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | |
| 172. «Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի մասին» ՀՀ օրենքից բխող «Բույսերի կարանտինի պետական ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ծառայության գործունեության կանոնակարգում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2002 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | |
| 173. «Հայաստանի Հանրապետության օդային տրանսպորտի աշխատանքների կազմակերպման գործունեության տեսակների լիցենզավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ օդային տրանսպորտի բնագավառում լիցենզավորման գործընթացի կանոնակարգում | ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | 2002 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | |
| 174. «Սևանա լճի անմիջական ազդեցության գոտում լանդշաֆտների պահպանության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջի կատարման ապահովում | ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ շահագրգիռ նախարարություններ և գերատեսչություններ | 2002 թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ | |
| 175. «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման ուղղությունների և գերակայությունների սահմանում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ | |
| 176. «Վերարտադրողական առողջության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | վերարտադրողականության խնդիրների իրավական դաշտի կարգավորում և բժշկական գործելակերպի կանոնակարգում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2002 թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ | |
| 177. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | պատմամշակութային արժեքներին հուշարձանի կարգավիճակի շնորհում և դրանց՝ ըստ նշանակության դասակարգում | ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչություն | 2002 թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 178. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | պետական հիգիենիկ հակահամաճարակային ծառայության վարչական իրավախախտումների արձանագրման դեպքում տուգանքների բարձրացում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2002 թ. օգոստոսի 2-րդ տասնօրյակ | |
| 179. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից՝ 50 և ավելի տոկոս բաժնետոմսերի տնօրինումն իրականացվող ընկերությունների հիմնական միջոցների և անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների վերագնահատման մասին» ՀՀ օրենքի կատարման արդյունքները ՀՀ կառավարություն ներկայացնելը | ընկերությունների հիմնական միջոցների և անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների վերագնահատում | ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտե<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն | 2002 թ. օգոստոսի 2-րդ տասնօրյակ | |
| 180. «Հողերի գոտևորման և օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | համայնքի վարչական սահմաններում հողօգտագործման պլանավորում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ | |
| 181. «Արտադրությունում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | համապատասխան իրավական դաշտի ստեղծում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | 2002 թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ | |
| 182. ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ-FAO) աջակցությամբ իրականացվող գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության ծրագրի մշակում | հանրապետության տնտեսությունում ստեղծված իրավիճակի գնահատում, գյուղատնտեսության զարգացման սահմանափակումների ու հնարավորությունների բացահայտում, միջին և հեռանկարային ժամանակահատվածների համար ճյուղի կայուն զարգացման ռազմավարության մշակում և երկրի պարենային անվտանգության ապահովում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն միջգերատեսչական հանձնաժողով | 2002 թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ | ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (FAO) |
| 183. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | քաղաքաշինական ընթացակարգերի հստակեցման առաջնահերթ միջոցառումների իրականացում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>Երևանի քաղաքապետ | 2002 թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 184. «ՀՀ համայնքների վարչական սահմաններում գտնվող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար հատկացված և անօգտագործելի հողերի կադաստրային արժեքների չափերի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ հողային օրենսգրքի կիրարկում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ | |
| 185. «Ներքին գործերի համակարգի աշխատողների համազգեստի և շարքային ու ղեկավար կազմի հանդերձանքի նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ներքին գործերի համակարգի աշխատողների համար համազգեստի միասնական ձևի և նորմայի սահմանում | ՀՀ ներքին գործերի նախարարություն | 2002 թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| 186. «Գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների օգտագործման լիցենզիաներ տալու և պայմանագրեր կնքելու կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հանրապետության տարածքի՝ վայրի բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և կայուն օգտագործման ապահովում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2002 թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| 187. «Գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով ՀՀ կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման լիցենզիաներ տալու և պայմանագրեր կնքելու կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հանրապետության տարածքի վայրի կենդանական աշխարհի օբյեկտների պահպանության և կայուն օգտագործման ապահովում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2002 թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| 188. «Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | գույքը և եկամուտները հայտարարագրող պետական պաշտոնյաների ցանկի ընդլայնում | ՀՀ պետական եկամուտների նախարարություն | 2002 թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| 189. «Երևան քաղաքի կամուրջների շահագործման և պահպանման խնդիրների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Երևան քաղաքի կամուրջների պահպանման բարելավում | Երևանի քաղաքապետ ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2002 թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ պետական բյուջեի պահուստային ֆոնդ |
| 190. «Թատերական արվեստին պետական աջակցություն ցուցաբերելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | թատերական արվեստի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում | ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն | 2002 թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| 191. «Սերմնաբուծության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | բույսերի սերմերի արտադրության և օգտագործման հետ կապված գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունների կարգավորում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2002 թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 192. «ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնագիտությունների ցանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկի ռացիոնալացում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. սեպտեմբերի 2րդ տասնօրյակ | |
| 193. «Էներգախնայողության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | տեղական էներգետիկ պաշարների օգտագործման արդյունավետության բարձրացման և էներգախնայողության միջոցառումների ներդրման գործընթացի խթանում | ՀՀ էներգետիկայի նախարարություն ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ | միջազգային դոնոր կազմակերպություններ |
| 194. ՀՀ տարածքում շինարարական աշխատանքների իրականացման նպատակով կապալառու կազմակերպության՝ մրցույթով ընտրության միասնական կարգի մշակում | կապալառու կազմակերպության մրցույթով ընտրության կարգերի միասնականացում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական գնումների գործակալություն | 2002 թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| 195. «Անասնաբուժական ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հանրապետության անասնաբուժական ծառայության գործունեության բարելավում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2002 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 196. «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | սնանկության վարույթների արդյունավետության բարձրացմանը, կառավարիչների ինստիտուտի կայացմանը, քաղաքացու սնանկության առանձնահատկությունների սահմանմանը նպաստում, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հետ առկա հակասությունների վերացում | ՀՀ արդարադատության նախարարություն | 2002 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 197. «ՀՀ տարածքում տեղագրագեոդեզիական, քարտեզագրական, ծանրաչափական, աերոֆոտոհանույթագրական, տիեզերական նկարահանման նյութերի գաղտնիությունը սահմանելու և պահպանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նածագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի կիրարկման ապահովում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 198. «Հողերի մոնիտորինգի իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ հողային օրենսգրքի կիրարկում, հողի վիճակի և գնի վերաբերյալ հետազոտությունների իրականացում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2002 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 199. «Տարածքային կառավարան մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | տարածքային կառավարման մարմինների լիազորությունների, տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հետ դրանց փոխհարաբերությունների հստակեցում | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար | 2002 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 200. «Հիմնադրամի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | բնագավառի հարաբերությունների կանոնակարգում | ՀՀ արդարադատության նախարարություն | 2002 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 201. «Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 2003-2005 թթ. ֆինանսական հոսքերի ծրագրավորման աշխատանքների իրականացում | ընկերության ֆինանսական կառավարման մեխանիզմների կատարելագործում | Երևանի քաղաքապետ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2002 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 202. «ՀՀ պետական սահմանային հսկողության (ինսպեկցիա) կատարելագործման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ պետական սահմանային հսկողության համակարգի կատարելագործում | ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն | 2002 թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| 203. «ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի «Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և աշխատատեղեր ստեղծելու նպատակով գործազուրկներին անհրաժեշտ միջոցներ տրամադրելու կարգի ու պայմանների մասին» N 431 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | պետական ֆինանսական միջոցների առավել նպատակային օգտագործման ապահովում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ | 2002 թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| 204. «Նավթի և գազի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | նավթի և գազի հետազոտման աշխատանքներին օտարերկրյա ներդրողների մասնակցության ապահովում | ՀՀ էներգետիկայի նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն | 2002 թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ | միջազգային դոնոր կազմակերպություններ |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 205. Շտապ բժշկական օգնության համակարգի կառուցվածքային բարեփոխումների հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | բնակչությանը մատուցվող շտապ բժշկական օգնության ծառայության բարելավում | ՀՀ առողջապահության նախարարություն | 2002 թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| 206. «Էլեկտրաէներգետիկական շուկային ծառայություններ մատուցող կառույցներ հիմնադրելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Էլեկտրաէներգետիկական շուկայի կառուցվածքի ձևավորում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | 2002 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 207. «Երևան քաղաքի գերեզմանատների սպասարկման, պահպանման և շահագործման կանոնների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | նշված հարաբերությունների կանոնակարգում | Երևանի քաղաքապետ<br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2002 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 208. «Անավարտ բնակարանային և քաղաքացիական նշանակության օբյեկտների հետագա օգտագործման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | անավարտ շինարարության օբյեկտների հետագա օգտագործման կանոնակարգում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն<br>Երևանի քաղաքապետ | 2002 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 209. Բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ցանցի, դրանց կառավարման համակարգի կատարելագործում, այդ տարածքներում պահպանության և կայուն օգտագործման աշխատանքների արդյունավետության բարձրացում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2002 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 210. «Ավտոմոբիլային տրանսպորտով բեռների և ուղևորների փոխադրումների կանոնների ու անվտանգության պահանջների կատարման վերահսկողության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ավտոտրանսպորտային փոխադրումների ծառայությունների, սպառողների և փոխադրողների շահերի պաշտպանության, երաշխավորված փոխադրումների իրականացման, փոխադրումների անվտանգության ապահովման և անբարեխիղճ մրցակցությունից պաշտպանության ապահովում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2002 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 211. «Կենսաթոշակառուների յուրաքանչյուր տարվա աշխատանքային (ապահովագրական) ստաժի համար տրվող հավելման չափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | կենսաթոշակի բարձրացում | ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ | 2002 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 212. «Արտադրությունում դժբախտ դեպքերի ուսումնասիրման և հաշվառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | գործատուներից տեղեկատվության ստացման ապահովում | ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն<br>ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ | 2002 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 213. Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) առանձին տեսակների վերաբերյալ տեղեկատվության բովանդակությունը և պարտադիր պահանջների մասին տեղեկատվությունն սպառողին հասցնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | սպառողների իրավունքների իրավական ապահովում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 214. Հայաստանի Հանրապետությունում լիզինգային գործունեությունը կանոնակարգող առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը | բարենպաստ տնտեսական միջավայրի ձևավորում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 215. «Աղքատության նվազեցման ամփոփ ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | տնտեսական աճի ապահովում, աշխատատեղերի ստեղծում, աղքատության կրճատում | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ այլ նախարարություններ | 2002 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 216. ՀՀ երկաթուղու համակարգի ընկերությունների («ՀՀ երկաթուղու փոխադրումներ» ՊՓԲԸ, «ՀՀ երկաթուղու շարժակազմ» ՊՓԲԸ, «ՀՀ երկաթուղու ենթակառուցվածքներ» ՊՓԲԸ) 2003-2005 թթ. ֆինանսական հոսքերի ծրագրավորման աշխատանքների իրականացում | համակարգի ընկերությունների ֆինանսական կառավարման մեխանիզմների կատարելագործում, տնտեսական առավել արդյունավետ որոշումներ ընդունելու համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգի ձևավորում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2002 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 217. «Երևան քաղաքում՝ պետական հաշվեկշռում գտնվող անավարտ շինարարություններն ավարտին հասցնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Երևան քաղաքում անավարտ շինարարությունների ավարտում | Երևանի քաղաքապետ | 2002 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջեի պահուստային ֆոնդ |
| 218. «Երևան քաղաքում տարերային աղետներից պաշտպանվելու նպատակով կառուցված ինժեներական կառույցների ամրացման և պահպանման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | տարերային աղետներից պաշտպանվելու նպատակով կառուցված ինժեներական կառույցների ամրացում | Երևանի քաղաքապետ | 2002 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջեի պահուստային ֆոնդ |
| 219. Սյունիք-Կենտրոն էլեկտրահաղորդման գծի ուժեղացում՝ «Ագարակ» 220 կՎ փոխանջատիչ կետի շինարարության ավարտ, Ագարակ-Շինուհայր 220 կՎ էլեկտրահաղորդման երկրորդ գծի վերակառուցման վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Իրան-Հայաստան էլեկտրաէներգիայի փոխհոսքերի հուսալիության բարձրացում, փոխհոսքերի հզորության մեծացում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | 2002 թ. մայիս-հոկտեմբեր | ԻԻՀ-ի ֆինանսավորմամբ՝ առաքված էլեկտրաէներգիայով փոխհատուցմամբ |
| 220. «Հատուկ հանրակրթական հաստատություններում կառավարման և ֆինանսավորման փորձնական ծրագրի ներդրման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ կրթության զարգացման 2001-2005 թթ. պետական ծրագրի 6-րդ բաժնի 3-րդ կետի պահանջների կատարման ապահովում, նոր եղանակի ներդրման փորձարկում և արդյունքների ուսումնասիրում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
| --- | --- | --- | --- | --- |
| 221. «2003 թվականի առողջապահական պետական նպատակային ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | առողջապահության բնագավառում պետական քաղաքականության ամրագրում | ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական առողջապահական գործակալություն | 2002 թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | |
| 222. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | պատմամշակութային արժեքներին հուշարձանի կարգավիճակի շնորհում և դրանց՝ ըստ նշանակության դասակարգում | ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչություն | 2002 թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |
| 223. «Ձկան և խեցգետնի պաշարների վերականգնման պահպանման, վերարտադրման, պաշարների որոշման, ձկան և խեցգետնի արդյունագործական որսի քանակի, ձևերի և կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջի կատարման ապահովում | ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա | 2002 թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | |
| 224. «Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգում ներառված միջոցառումների կիրարկման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգում ներառված միջոցառումների իրականացման ապահովում | ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն | 2002 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| 225. Վերականգնման ենթակա բազմաբնակարան շենքերի վերականգնման համար պետական ֆինանսական աջակցության տրամադրման հայեցակարգի մշակում | վերականգնման ենթակա շենքերի վերանորոգման աշխատանքների իրականացմանը խթանող մեխանիզմների մշակում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2002 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| 226. «Գրադարանային գործի և գրադարանների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | գրադարանների գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծում | ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն | 2002 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| 227. «ՀՀ տարաբնակեցման գլխավոր ուրվագծի մշակման, համաձայնեցման, փոփոխման և իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ուրվագծի մշակմանը, համաձայնեցմանը, փոփոխմանը և իրականացմանը ներկայացվող ընթացակարգի սահմանում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2002 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| 228. «Վտանգավոր արտադրական օբյեկտների արդյունաբերական անվտանգության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | արտադրության մեջ աշխատանքների անվտանգ կատարման, վտանգավոր օբյեկտների ապահովագրման և տեխնիկական անվտանգության այլ պարամետրերի օրենսդրական ապահովում | Հայլեռտեխհսկողություն | 2002 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 229. Լեռնային գյուղերի զարգացման քաղաքաշինական հայեցակարգը ՀՀ կառավարություն ներկայացնելը | լեռնային գյուղերի ներդաշնակ զարգացման պետական քաղաքականության ձևավորման հայեցակարգի մշակում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2002 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |
| 230. «Միջին մասնագիտական կրթության մասնագի-տությունների նոր ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառա-վարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներ-կայացնելը | միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների անվանական արդիականացում, ցանկի համապատասխանեցում ԱՊՀ անդամ և մյուս պետությունների ցանկերին | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| 231. «ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի «Փաստաթղթերի՝ ըստ տեսակների, պահպանության ժամկետների նշումով ցանկը հաստատելու մասին» N 833 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | փաստաթղթերի պահպանության և արխիվացման գործընթացի հստակեցում | ՀՀ կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչություն | 2002 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 232. «Բարձրագույն մասնագիտական կրթության պետական համակարգի օպտիմալացման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | բարձրագույն մասնագիտական կրթության պետական համակարգի ներբուհական և միջբուհական օպտիմալացում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 233. «Ոռոգման ջրի մատակարարման կանոնները հաս-տատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ոռոգման ջրի մատակարարման գործընթացի կանոնակարգում | ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտե | 2002 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 234. «ՀՀ բնակավայրերի հողերի գոտիականության արժեքների սահմանման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ հողային օրենսգրքի կիրարկում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 235. «ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություններ կա-տարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | օրենսդրության կատարելագործում | Երևանի քաղաքապետ | 2002 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 236. «Իմիգրացիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | օտարերկրյա քաղաքացիների, այդ թվում՝ ծագումով հայերի, ՀՀ-ում մշտական բնակության հաստատման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորում | ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն | 2002 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| 237. «Միջին մասնագիտական կրթության մի շարք մասնագիտությունների չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հաստատությունների շրջանավարտների կրթության մակարդակի և որակավորման գնահատման հիմքի ապահովում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 238. «Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2003 թվականի պետական ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնել | ՓՄՁ սուբյեկտների գործունեության արդյունավետության բարձրացում, դրանց մրցակցային ու արտահանման հնարավորությունների ընդլայնում, ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսական /վարկային և ներդրումային աջակցության հնարավորությունների ընդլայնում, ՓՄՁ սուբյեկտների տեխնիկական աջակցության (խորհրդատվական, տեղեկատվական, կադրերի մասնագիտական ուսուցման ու վերապատրաստման և այլն) մատչելիության ապահովում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե, այլ աղբյուրներ |
| 239. «Իոնացվող ճառագայթումից պաշտպանության և իոնացվող ճառագայթման աղբյուրների անվտանգության նորմերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենք ( 7-րդ հոդվածի «ժա» կետ) | Հայպետատոմհսկողություն | 2002 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| 240. «Իոնացվող ճառագայթումից պաշտպանության և իոնացվող ճառագայթման աղբյուրների անվտանգության կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենք ( 7-րդ հոդվածի «ժա» կետ) | Հայպետատոմհսկողություն | 2002 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| 241. «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | օրենսդրական դաշտի լրացում | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 2002 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| 242. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ապրանքների և ծառայությունների ներդաշնակ կոդերի միջազգային դասակարգման ընդունման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի միջազգային ստանդարտների կիրառում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |
| 243. «Տրանսպորտի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանջներին գործող օրենքի համապատասխանեցում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | 2002 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 244. «ՀՀ տարաբնակեցման գլխավոր ուրվագիծը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ հավասարակշռված տարաբնակեցման համակարգի ստեղծման նպատակով բնակչության, արտադրական ուժերի և միջոցների արդյունավետ տեղաբաշխման, առկա ռեսուրսների գնահատման, մարզերի, համայնքների և բնակավայրերի տարածքային զարգացման և օպտիմալ օգտագործման ռեժիմների սահմանում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 2002 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |
| 245. «Փաստաթղթերի պարտադիր օրինակի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ մշակութային ժառանգության համալրման համար պայմանների ստեղծում | ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն | 2002 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| 246. «Նախադպրոցական և արտադպրոցական հաստատությունների մեկ տողով՝ ըստ երեխաների թվի, ֆինանսավորման մեխանիզմը և բանաձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակության ֆինանսավորման կանոնակարգում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2002 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| 247. «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման գործընթացի կանոնակարգում | ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտե | 2002 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| 248. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական փաստաթղթերի նախագծերը ՀՀ կառավարություն ներկայացնելը | տեղական ինքնակառավարման համակարգում իրավական դաշտի հստակեցում և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի կիրարկման ապահովում | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ պետական եկամուտների նախարարություն | 2002 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | |
| 249. Միամյա և բազմամյա մշակաբույսերի, կենդանիների գենոֆոնդի պահպանման և համալրման ուղղությամբ իրականացված միջոցառումների վերաբերյալ ՀՀ կառավարություն հաշվետվություն ներկայացնելը | գենոբանկի պահպանում, համալրում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2002 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 250. «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքի՝ 2002 թվականի Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ծրագրի 1-ին կետով սահմանված նորմատիվ ակտերի ընդունման ապահովում | Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2002 թ. տարեկան ծրագրի կատարման ապահովում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2002 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 251. Աշխատանքի և ծառայությունների տեխնիկական կանոնակարգերի ընդունման մասին ՀՀ կառավարություն տեղեկատվություն ներկայացնելը | մարդու կյանքի, առողջության, գույքի և շրջակա միջավայրի ապահովման համար արտադրանքի ու ծառայությունների անվտանգության պահանջների սահմանում և համապատասխանեցում միջազգային նորմերին ու ՀՀ օրենսդրությանը | ՀՀ կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման վարչություն | 2002 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 252. Ընդհանուր տեխնիկական և կազմակերպական նորմատիվ փաստաթղթերի ընդունման մասին ՀՀ կառավարություն տեղեկատվություն ներկայացնելը | ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման համակարգերի ներդաշնակեցումը միջազգային ու տարածաշրջանային կանոններին և նորմերին | ՀՀ կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման վարչություն | 2002 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 253. Որակի կառավարման համակարգի նորմատիվ փաստաթղթերի ընդունման մասին ՀՀ կառավարություն տեղեկատվություն ներկայացնելը | աջակցություն հայրենական արտադրողներին արտադրանքի արտահանման գործընթացում | ՀՀ կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման վարչություն | 2002 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 254. էկոլոգիական կառավարման համակարգի նորմատիվ փաստաթղթերի ընդունման մասին ՀՀ կառավարություն տեղեկատվություն ներկայացնելը | շրջակա միջավայրի անվտանգության ապահովմանն աջակցություն | ՀՀ կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման վարչություն | 2002 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| 255. «էներգահամակարգին անհապաղ օգնություն (Քանաքեռի ՀԷԿ-ի վերականգնում)» վարկային ծրագրի իրականացման մասին ՀՀ կառավարություն տեղեկատվություն ներկայացնելը | Քանաքեռի ՀԷԿ-ի ընդհանուր կայանային կառույցների ու երկու ագրեգատի վերակառուցում և արդիականացում, էլեկտրակայանի աշխատանքի արդյունավետության ու հուսալիության բարձրացում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | 2002 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե, KFW բանկ, սեփական միջոցներ |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 256. Քրեակատարողականհիմնարկներիներքինկանոնակարգերի նախագծերի լրամշակում և դրանց միջազգային փորձաքննության կազմակերպում | ազատազրկման, ազատության սահմանափակման և կալանքի ձևով պատիժները կրելու, անձանց կալանքի տակ պահելու՝ օրենքով սահմանված կարգի և պայմանների պահպանման, դատապարտյալների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու համար անհրաժեշտ մեխանիզմների, նրանց կողմից իրենց պարտականությունները կատարելու համար առավել բարենպաստ պայմանների ապահովում | ՀՀ արդարադատության նախարարություն | 2002 թ. 1-ին և 2-րդ եռամսյակներ | |
| 257. Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց բժշկական ապահովման կարգի նախագծի լրամշակում և միջազգային փորձաքննության կազմակերպում | դատապարտյալների և կալանքի տակ գտնվող անձանց բժշկական սպասարկման և քրեակատարողական հիմնարկների նկատմամբ սանիտարական հսկողության իրականացման մեխանիզմների սահմանում | ՀՀ արդարադատության նախարարություն | 2002 թ. 1-ին և 2-րդ եռամսյակներ | |
| 258. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում միջազգային համագործակցության ընդլայնման միջոցառումների ցանկը ՀՀ կառավարություն ներկայացնելը | տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ՀՀ միջազգային համագործակցության ապահովում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 2002 թ. 2-րդ եռամսյակ | |
| 259. «Օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ օրենսդրության կատարելագործում և միջազգային չափանիշներին համապատասխանեցում | ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն | 2002 թ. 2-րդ եռամսյակ | ՀՀ պետական բյուջե |
| 260. «Պետական տուրքերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | արդյունաբերական սեփականության իրավական դաշտի կատարելագործում | ՀՀ արտոնագրային վարչություն | 2002 թ. 1-ին և 4-րդ եռամսյակներ | |
| 261. «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Եվրամիության պահանջներին արդյունաբերական սեփականության իրավական դաշտի համապատասխանեցում | ՀՀ արտոնագրային վարչություն | 2002 թ. 4-րդ եռամսյակ | |
| 262. Տեղեկատվական մարքեթինգային կենտրոնի մարզային կառույցների ձևավորում, մեթոդական և տեխնիկական աջակցության իրականացում | Հայաստանի արտադրողի տեղեկատվական ինտեգրացում համաշխարհային տնտեսությանը | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. 2-րդ կիսամյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 263. «Օտարերկրյա պետությունում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետի բժշկական ապահովագրության վճարի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջի կատարման ապահովում | ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2002 թ. 2-րդ կիսամյակ | ՀՀ պետական բյուջե |
| 264. «Օտարերկրյա պետությունում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետի հետ բնակվող երեխաների կրթական ծախսերը հոգալու նպատակով դիվանագետին տրամադրվող փոխհատուցման չափի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջի կատարման ապահովում | ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2002 թ. 2-րդ կիսամյակ | ՀՀ պետական բյուջե |
| 265. «Նաիրիտ» և «Ողջագործ» ընկերությունների արտադրական գործունեության վերաբերյալ ՀՀ կառավարություն տեղեկատվություն նեկայացնելը | ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. յուրաքանչյուր կիսամյակ | |
| 266. ՀԱԷԿ-ի շահագործման անվտանգության աստիճանի բարձրացման վերաբերյալ ՀՀ կառավարություն տեղեկատվություն ներկայացնելը | անվտանգության ապահովում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | շարունակական յուրաքանչյուր եռամսյակը հաջորդող ամսվա 10-ին ներկայացվող տեղեկատվություն | ՀՀ պետական բյուջե, ԱՄՆ-ի էներգետիկ դեպարտամենտ, TACIS |
| 267. Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ բլոկի շինարարության շարունակման և ավարտման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթման վերաբերյալ ՀՀ կառավարություն տեղեկատվություն ներկայացնելը | շինարարության շարունակում և ավարտ | ՀՀ էներգետիկայի նախարարություն | շարունակական | միջազգային դոնոր կազմակերպություններ, ռազմավարական ներդրող |
| 268. Հայաստանի Հանրապետության պարենային ապահովության քաղաքականության ծրագրով 2002 թ. համար նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքի մասին ամփոփ տեղեկատվություն ՀՀ կառավարություն ներկայացնելը | եվրոպական հանձնաժողովի «Պարենային ապահովությունը Հայաստանում» ծրագրի միջոցառումների կատարման ապահովում, հանրապետության բնակչության պարենային ապահովության բարելավման գործընթացի համակարգում և իրավիճակի գնահատում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ այլ շահագրգիռ նախարարություններ և գերատեսչություններ | տարեկան 3 անգամ՝ եռամսյակից հետո 1-ին տասնօրյակ | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 269. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցելու վերաբերյալ ՀՀ կառավարություն տեղեկատվություն ներկայացնելը | ՀՀ կառավարության հետ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման գործում տեղեկատվական տեխնոլոգիաների մասնավոր ընկերությունների, կրթական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների համագործակցության ապահովում | «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. ընթացքում | |
| 270. ՀՀ ԱՀԿ-ին անդամակցության բանակցությունների ավարտի վերաբերյալ ՀՀ կառավարություն տեղեկատվություն ներկայացնելը | ՀՀ ԱՀԿ-ին լիիրավ անդամակցություն | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | 2002 թ. | ՀՀ պետական բյուջե |
| 271. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» և «Համատիրության մասին» ՀՀ օրենքների կիրարկումն ապահովող անհրաժեշտ փաստաթղթերի մշակում | օրենքների կիրարկման ապահովում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | օրենքի ընդունումից հետո 3 ամսվա ընթացքում | |
| 272. «Հուղարկավորության կազմակերպման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մշակում | օրենքի կիրարկման ապահովում | ՀՀ քաղաքաշինության նախարարություն Երևանի քաղաքապետ | օրենքի ընդունումից հետո 3 ամսվա ընթացքում | |
| 273. «Սեյսմիկ պաշտպանության բնագավառում հատուկ նշանակության, կարևոր և վթարավտանգ օբյեկտների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | սեյսմիկ պաշտպանության բնագավառում պետական կառավարման ապահովում | ՀՀ կառավարությանն առընթեր սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն | օրենքի ընդունումից հետո 3 ամսվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե |
| 274. Սեյսմաշրջանացման աշխատանքների լիցենզիաներ տալու կարգի սահմանում | սեյսմիկ պաշտպանության բնագավառում պետական կառավարման ապահովում | ՀՀ կառավարությանն առընթեր սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն | օրենքի ընդունումից հետո 3 ամսվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե |
| 275. «Օտարերկրյա պետություններում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետի ամուսնու սոցիալական ապահովագրության ժամանակաշրջանում սոցիալական ապահովագրության մուծումների կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջի կատարման ապահովում | ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն | պետական կենսաթոշակների մասին օրենքի ընդունումից հետո | ՀՀ պետական բյուջե |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 276. «Էլեկտրոնային փաստաթղթի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | փաստաթղթափոխանակման խնդիրների լուծման համար տեղեկատվայնացման գործընթացի կիրառում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | տեղեկատվայ-նացման, տեղեկատվու-թյան և տեղեկա-տվության պաշտպանու-թյան մասին օրենքի ընդունումից հետո 3 ամսվա ընթացքում | |
| 277. «Հայաստանի Հանրապետության վճարովի ավտոճա-նապարհներ ունենալու, դրանց շահագործման և պահպանման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ավտոճանապարհների պահպանման համար ֆինանսական միջոցների ապահովում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | վճարովի ավտոճանա-պարհների մասին օրենքի ընդունումից հետո 3 ամսվա ընթացքում | |
| 278. «Հայաստանի Հանրապետության տարածքում օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման համար լեռնային հատկացումների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ընդերքի պահպանման և օգտագործման պահանջ-ների կանոնակարգում, լեռնահատկացման կարգերի սահմանում | Հայլեռտեխհսկողու-թյուն<br>ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն | ընդերքի մասին օրենքի ընդունումից հետո 2 ամսվա ընթացքում | |
| 279. «Պետական գույքի մասնավորեցման (սեփականա-շնորհման) մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրա-ցումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից բխող առաջնահերթ միջոցառումների իրականացման ժամանա-կացույցը ՀՀ կառավարություն ներկայացնելը | պետական գույքի մասնավորեցման գործընթացի արդյունավետության բարձրացում | ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն | օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 1 ամսվա ընթացքում | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 280. «Կոնցեսիոն և կայունացման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ընդերքի արդյունավետ օգտագործման և այդ ոլորտում ներդրումների խթանում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն<br><br>ՀՀ պետական եկամուտների նախարարություն | ընդերքն օգտակար հանածոների ուսումնասիրության և արդյունահանման նպատակով տրամադրելու (կոնցեսիայի) մասին օրենքի ընդունումից հետո 2 ամսվա ընթացքում | |
| 281. «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքից բխող նորմատիվ ակտերի ընդունում | ընդերքի պահպանության և օգտագործման կանոնակարգում | ՀՀ բնապահպանության նախարարություն | ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի և կոնցեսիաների մասին օրենքի ընդունումից հետո | |
| 282. «Քաղաքացիական ավիացիայի օդանավերով ուղևորների կողմից թռիչքի ընթացքում պահպանման փոխանցված զենքի և ռազմամթերքի փոխադրման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ավիացիոն անվտանգության ապահովում | ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | ավիացիայի մասին օրենքի ընդունումից հետո | |
| 283. «Հայաստանի Հանրապետություն և Հայաստանի Հանրապետությունից դուրս չվերթներ կատարող ավիաընկերությունների օդանավերով տեղափոխվող ուղևորների և երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվության ապահովագրության նվազագույն չափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | օդանավերով տեղափոխվող ուղևորների և երրորդ անձանց շահերի պաշտպանություն | ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | ավիացիայի մա-սին օրենքի ընդունումից հետո | |
| 284. «ՀՀ ավտոմոբիլային ճանապարհներով ավտոմոբիլային տրանսպորտով ծանրաքաշ և մեծ եզրաչափերով բեռների փոխադրման կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ավտոմոբիլային ճանապարհներով բեռների փոխադրման աշխատանքի անվտանգության ապահովում | ՀՀ ներքին գործերի նախարարություն | երթևեկության անվտանգության մասին օրենքի ընդունումից հետո 3 ամսվա ընթացքում | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 285. «ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներին գովազդի տեղադրման կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հանրապետական նշանակության ավտոճանա-պարհներին գովազդի տեղադրման աշխատանքների կանոնակարգում | ՀՀ ներքին գործերի նախարարություն | երթևեկության անվտանգու-թյան մասին օրենքի ընդունումից հետո 3 ամսվա ընթացքում | |
| 286. «էլեկտրոնային առևտրի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | արտաքին և ներքին առևտրի խթանում | ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | տեղեկատվայ-նացման, տեղեկատվու-թյան և տեղեկա-տվության պաշտպանու-թյան մասին օրենքի ընդունումից հետո 3 ամսվա ընթացքում | |
| 287. «էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ձեռքով կատարված ստորագրության և էլեկտրոնային թվային ստորագրության՝ իրավական տեսանկյունից համարժեքության ապահովում, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության խթանում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | տեղեկատվայ-նացման, տեղե-կատվության և տեղեկատվու-թյան պաշտպա-նության մասին օրենքի ընդունումից հետո 3 ամսվա ընթացքում | |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 288. «Հայաստանի Հանրապետությունում համատիրությունների և ջրօգտագործողների սպառողական կոոպերատիվների կայացման համալիր ծրագրի հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանի Հանրապետությունում համատիրությունների և ջրօգտագործողների սպառողական կոոպերատիվների կայացման ապահովում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար<br>ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտե<br>Երևանի քաղաքապետ<br>ՀՀ մարզպետներ | 2002 թ. տեղական ինքնակառավարման մասին ու ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների միությունների մասին օրենքների ընդունումից հետո 2 ամսվա ընթացքում | |
| 289. «Էլեկտրահաղորդման սեկտորի վերականգնում» վարկային ծրագրի իրականացման մասին ՀՀ կառավարություն տեղեկատվություն ներկայացնելը | «Վանաձոր-2» և «Կամո» ԵԿ-ի վերականգնում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | վարկային պայմանագրի ժամկետներում | KFW բանկ, սեփական միջոցներ |
| 290. «Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» վարկային ծրագրի իրականացման մասին ՀՀ կառավարություն տեղեկատվություն ներկայացնելը | էլեկտրաէներգետիկ համակարգի աշխատանքի հուսալիության բարձրացում, 220 կՎ և 110 կՎ ԵԿ սարքավորումների արդիականացում | ՀՀ էներգետիկայի նախարարություն | վարկային պայմանագրի ժամկետներում | Համաշխարհային բանկ, Միջազգային համագործակցության ճապոնական բանկ, վարկային միջոցներ և սեփական միջոցներ |
| 291. Արաքս գետի հիդրոէներգետիկ պոտենցիալի օգտագործման վերաբերյալ ՀՀ էներգետիկայի նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության էներգետիկայի նախարարության միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի իրականացման մասին ՀՀ կառավարություն տեղեկատվություն ներկայացնելը | Մեղրու ՀԷԿ-ի կառուցման նախադրյալների ստեղծում | ՀՀ էներգետիկայի նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն | Իրանի Իսլամական Հանրապետության հետ համաձայնեցված ժամկետներում | հնարավոր ներդրողներ |

| Միջոցառումը | Նպատակը (արդյունքը) | Կատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|
| 292. Իրան-Հայաստան գազատարի կառուցման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության ու Իրանի Իսլամական Հանրապետության գազիարտահանմանԻրանիազգայինընկերությանմիջևստորագրված հուշագրի իրականացման մասին ՀՀ կառավարություն տեղեկատվություն ներկայացնելը | ՀՀ գազամատակարարման աղբյուրների բազմազանեցում | ՀՀ էներգետիկայի նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն | Իրանի Իսլամական Հանրապետության հետ համաձայնեցված ժամկետներում | հնարավոր ներդրողներ |